

**ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ԽՍՀ ԱՌԱՋԻՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

*Քանալի բառեր*<sup>1</sup> զինանշան, գրություն, Թուրքմենական ԽՍՀ, Թուրքմենիա, Աշխաբադ, Հայկական ԽՍՀ, Հայաստան, ԽՍՀՄ, հայոց լեզու, սահմանադրություն:

Հոդվածում ներկայացվում է Թուրքմենական ԽՍՀ առաջին զինանշանի (1926-1927 թթ.) հայատառ գրության պատմությունը: Համաթուրքմենական երկրորդ համագումարի ժամանակ (26 մարտ - 3 ապրիլի 1927 թ.) Թուրքմենական ԽՍՀ զինանշանը փոփոխման է ենթարկվել, և այնտեղ արդեն հայերեն գրություն չկար:

**ԷԹՆՈԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԻՐԱՆԻ ԵՎ ՏԱՋԻԿՍՏԱՆԻ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

*Քանալի բառեր*<sup>1</sup> Իրան, Թեհրան, Տաջիկստան, Դուշանբե, Ուզբեկստան, ԽՍՀՄ, Կենտրոնական Ասիա, էթնիկական, կրոնական, հարաբերություններ:

Եփրատի արևելյան շրջաններից մինչև Ամուդարյա ընկած տարածքները, որոնք ընդգրկում են ժամանակակից Իրաքի, Իրանի, Թուրքմենստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, ինչպես նաև Աֆղանստանի տարածքի մի հատվածը, պարսկական աղբյուրներում հիշատակվում են «Իրանշահիր» կամ «Իրանզամին» աշխարհագրական տեղանուններով<sup>1</sup>: Դաշթ-է Քավիր և Դաշթ-է Լուիթ անապատային գոտիներն «Իրանշահիրը» բաժանում էին արևմտյան և արևելյան հատվածների: Արևելյան հատվածում էին գտնվում Բակտրիան, Խորեզմը, Սողդը (*վերջինիս տարածքում է կազմավորվել ժամանակակից Տաջիկստանը*), իսկ արևմտյան հատվածի մի զգալի մասը զբաղեցնում է ժամանակակից Իրանի տարածքը:

Արաբական, իսկ այնուհետև մոնղոլական արշավանքների հետևանքով խաթարվում է «Իրանշահիրի» միատարրությունը, իսկ հետագա դարերի ընթացքում ժամանակակից Կենտրոնական Ասիայի տարածքում ուզբեկական խանությունների կազմավորմամբ իրանական պատմամշակութային ազդեցությունը զգալիորեն նվազում է<sup>2</sup>:

<sup>1</sup> Christensen P., The Decline of Iranshahr, University of Copenhagen, 1993, p. 15.

<sup>2</sup> خیراندیش عبدالرسول، خاطره تاریخی ایرانیان و تاثیر آن بر چگونگی نگرش آنان به آسیای مرکزی، مطالعات منطقه ای: آسیای مرکزی (مجموعه مقالات)، تهران 2008، ص. 51.

Ինչ վերաբերում է «տաջիկ» էթնոսի ձևավորմանը, ապա դրա վերաբերյալ գիտական գրականության մեջ առկա են տարատեսակ կարծիքներ: Խորհրդային պատմաբանների, մասնավորապես տաջիկ գիտնականների շրջանում գերակայում է այն պնդումը, որ տաջիկների՝ որպես ինքնուրույն էթնոսի և տաջիկական պետականության ձևավորումը տեղի է ունեցել Սամանյան հարստության կառավարման շրջանում՝ 9-րդ դարի վերջին, 10-րդ դարի սկզբին, իսկ 11-րդ դարի կեսերից արդեն քաղաքական-իրավական բառապաշարում «պարսիկի» փոխարեն գործածվում էր «տաջիկ» էթնիկական ինքնանվանումը<sup>3</sup>:

Որպես վերջինիս հակափաստարկ՝ գիտական գրականության մեջ առկա է նաև այն թեզը, որ 10-րդ դարում պարզապես հնարավոր չէր Կենտրոնական Ասիայի իրանախոս ժողովուրդներից տաջիկներին՝ որպես առանձին էթնոսի, առանձնացնել, քանի որ Կենտրոնական Ասիայում իրանախոս ժողովուրդներն ինտեգրված էին համընդհանուր իրանական էթնիկական համայնքին և նրա անքակտելի մասն էին կազմում<sup>4</sup>:

20-րդ դարի սկզբին, երբ խորհրդային կարգերի հաստատումից հետո ձևավորվում էին ժամանակակից Կենտրոնական Ասիայի սահմանները, Տաջիկստանը՝ որպես ինքնուրույն պետական միավոր, ընդգրկվեց Ուզբեկստանի

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմում: Հետագա տարիներին Տաջիկստանի՝ Ուզբեկստանի կազմից դուրս գալուց հետո իրանական քաղաքակրթական կարևորագույն կենտրոններ Սամարղանդն ու Բուխարան, որոնց բնակչության մեծամասնությունն այդ շրջանում իրանախոս էր, ընդգրկվեցին ոչ թե Տաջիկստանի, այլ Ուզբեկստանի կազմում<sup>5</sup>: Այդ զարգացումներին զուգահեռ 1930-ական թթ. տաջիկների շրջանում ինքնակազմակերպման և քաղաքականացման գործընթաց է սկսվում<sup>6</sup>:

Իհարկե, 1929 թ. Տաջիկստանն առանձնացավ Ուզբեկստանից և ԽՍՀՄ կազմում դարձավ որպես առանձին հանրապետություն, սակայն մինչ օրս ուզբեկների և տաջիկների միջև պատմական, տարածքային հարցերի շուրջ առկա են լուրջ տարածայնություններ<sup>7</sup>:

Ուզբեկներն իրենց համարում են Բուխարական էմիրության, տաջիկները՝ Սամանյան տերության ժառանգորդ և իրավահաջորդ՝ կողմերից յուրաքանչյուրը ներկայացնելով իր փաստարկները, իսկ Իրանի մտավորականությունն ու գիտական-փորձագիտական շրջանակներն էլ Կենտրոնական Ասիան համարում են իրանական քաղաքակրթական և մշակութային սահմաններում գտնվող տարածք<sup>8</sup>:

Ավելին, մինչ օրս Իրանի պաշտոնական մամուլն ԻԻՀ նախագահի՝ Կենտրոնական Ասիա կատարվող այցերը լու-

*Արդ օլ-Տասուլ, Իրանցիների պատմական հիշողությունը և դրա ազդեցությունը Կենտրոնական Ասիայի վերաբերյալ նրանց ընկալումների վրա, Իրան և տարածաշրջանային հետազոտություններ. Կենտրոնական Ասիա, Թեհրան, 2008, էջ 51):*

<sup>3</sup> **Насурдинов Э.** Трансформация правовой культуры таджиков и развитие её содержательных компонентов в рамках исламской цивилизации. Бизнес в законе. Экономико-юридический журнал, 2014, № 2, стр. 107.

<sup>4</sup> **Bleuer Ch., Nouruzhanov K.,** Tajikistan: a political and social history, ANU E PRESS, 2013, p. 31.

<sup>5</sup> **Dagiev D.,** Regime Transition in Central Asia: Stateness, nationalism and political change in Tajikistan and Uzbekistan, New York 2014, p. 24.

<sup>6</sup> **Bleuer Ch., Nouruzhanov K.,** նշվ. աշխ., էջ 72:

<sup>7</sup> **Бжезинский З.** Великая шахматная доска (Господство Америки и его геостратегические императивы). Москва, 1998, стр. 159-160.

<sup>8</sup> همایون ناصر تکمیل، مسئله هویت در آسیای مرکزی، ایران و مطالعات منطقه ای: آسیای مرکزی 20. (مجموعه مقالات)، تهران 2008، ص. 20. [Հումայուն Նասեր Թաքմիլ, Ինքնության խնդիրը Կենտրոնական Ասիայում, Իրան և տարածաշրջանային հետազոտություններ. Կենտրոնական Ասիա, Թեհրան, 2008, էջ 20]:

սաբանելիս տարածաշրջանը բնութագրում է որպես Իրանի մշակութային-քաղաքակրթական տարածք<sup>9</sup>:

Թեև ԽՍՀՄ տարիներին Իրանը Կենտրոնական Ասիայի երկրների հետ ուղիղ հաղորդակցության հնարավորություն չունեի, սակայն էթնոմշակութային գործոնով պայմանավորված Տաջիկստանն առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում Իրանում ձևավորված պանիրանական գաղափարախոսության մեջ:

*«Ո՞րն է իրանցիների հայրենիքը, և ովքե՞ր են իրանցիները»*, - Իրանի հասարակական-քաղաքական դիսկուրսում հատկապես առանձնանում էին այդ հարցերը:

Առաջին հարցադրմանն ի պատասխան նշվում էր, որ իրանցիների հայրենիքը ընդգրկում է այն տարածքները, որտեղ ապրել են իրանախոս ժողովուրդները՝ պատմության ընթացքում ձևավորելով և զարգացնելով իրանական քաղաքակրթական տարածքը, իսկ երկրորդ հարցադրմանն ի պատասխան՝ պանիրանիստները գտնում էին, որ իրանցիներն այն ժողովուրդներն են, որոնք անկախ ծագումից, լեզվից, դավանանքից բնակվել են պատմական «Իրանշահրում»<sup>10</sup>:

Իրանում պանիրանական շարժման ակտիվացմանը զուգահեռ 1960-ական թվականներին Տաջիկստանում մշակութային կյանքը վերելք էր ապրում: Չնայած ԽՍՀՄ-ի՝ Կենտրոնական Ասիայի և Իրանի պարսկախոս ժողովուրդներին միմյանցից հեռացնելու, տարանջատելու քաղաքականությանը՝ տաջիկ բանաստեղծները ստեղծագործում էին

<sup>9</sup> «Iran» newspaper, No: 6746, 03 April 2018, p. 3.

<sup>10</sup> Սադեղինիա Հ., Պանիրանիզմը 19-20-րդ դարերի Իրանի հասարակական-քաղաքական զարգացումների համատեքստում, Երևան, 2007, էջ 85:

պարսկերենով՝ պահպանելով իրանցիների և տաջիկների միջև հոգևոր-մշակութային կապը<sup>11</sup>:

Խորհրդային շրջանի իրանա-տաջիկական հարաբերություններին վերաբերող պարսկերեն աղբյուրներում երկու երկրները հիշատակվում են որպես «Մեծ Իրանից կտրված երկու երկրամասեր»<sup>12</sup>:

Տաջիկ մտավորականության շրջանում տաջիկները, պարսկական-տաջիկական մշակույթն ու գրականությունը դիտվում էին որպես հպարտության և ազգային բարձր ինքնագիտակցության ցուցիչ: Չնայած խորհրդային քաղաքականությանը՝ տաջիկ մտավորականներին հաջողվեց պահպանել լեզուն, մշակույթը, ազգային ավանդույթները, երաժշտությունը, Նովրուզի տոնակատարությունը:

ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին Տաջիկստանում ձևավորված ազգային բարձր ինքնագիտակցությամբ մտավորականների սերունդն էր, որը Տաջիկստանի անկախության հռչակման ընթացքում արդեն հստակ ձևակերպել էր ազգային արժեքներին վերադառնալու օրակարգը, հենց այդ ազգային գաղափարներն էին, որի շուրջ միավորվեցին տարբեր քաղաքական ուժերը:

Ինչ վերաբերում է կրոնական գործոնին, ապա վերլուծելով ժամանակակից փուլում Իրանի և Տաջիկստանի հարաբերություններում էթնոկրոնական գործոնը՝ նկատում ենք, որ դեռ 1978-1979 թթ. Իսլամական հեղափոխությունից հետո Իրանը ԽՍՀՄ մուսուլմանական հանրապետությունների մոտ ընկալվեց որպես սպառնալիք: Մի կողմ թողնելով

<sup>11</sup> Sinha M., The Persian World: Understanding People, Polity and Life in Iran, Afghanistan and Tajikistan, Hope India, 2015, p. 93.

<sup>12</sup> محسن ملکيان، روابط فرهنگي ايران و تاجیکستان، مطالعات اوراسيائي مرکزي، 2012، شماره 11، ص. 97-130. [Մոհսեն Մալեքիան, Իրանի և Տաջիկստանի մշակութային հարաբերությունները, Կենտրոնական Եվրասիայի հետազոտություններ, 2012, չ. 11, էջ 97-130]:

այն հանգամանքը, թե Իրանն ինչ մեթոդներով էր փորձում «արտահանել» իսլամական հեղափոխությունը, Իրանը գիտակցում էր, որ հետխորհրդային մուսուլմանական հանրապետություններում, մասնավորապես Տաջիկստանում չկային բավարար այն պայմանները, որոնց դեպքում հնարավոր կլիներ իսլամական հեղափոխություն իրականացնել<sup>13</sup>:

Ուսումնասիրելով Տաջիկստանի հետխորհրդային շրջանի պատմությունը՝ նկատում ենք, որ իրանական հեղափոխության նկատմամբ խորհրդային շրջանում ձևավորված մտահոգություններն ազդեցին նաև նորանկախ Տաջիկստանի քաղաքական էլիտայի մոտեցումների վրա: Իրանի Իսլամական Հանրապետության նկատմամբ այդ անվստահությունն առկա է մինչ օրս, և այն արտահայտվում է տարատեսակ գործողությունների միջոցով:

Էթնոկրոնական գործոնը վերջին երեք տասնամյակի ընթացքում երկու իրանախոս երկրների՝ Իրանի և Տաջիկստանի հարաբերությունների վրա կարևոր ազդեցություն է ունեցել: Իրանը, Տաջիկստանի հետ ունենալով մշակութային, լեզվական և էթնիկական խորը կապեր, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մեծ կարևորություն է տվել իրանախոս այդ երկրի հետ հարաբերությունների զարգացմանը՝ կարևորելով ինչպես քաղաքական և տնտեսական կապերի ընդլայնումը, այնպես էլ անվտանգության հարցերը:

Տաջիկստանի անկախության հռչակումից հետո էթնոկրոնական գործոնն այդ երկրի հասարակական-քաղաքական կյանքում ձեռք բերեց կարևոր նշանակություն: Ավելին, այն իր նշանակությունը ոչ միայն չկորցրեց ինչպես 1992 թ.

սկսված քաղաքացիական պատերազմի ընթացքում, այնպես էլ 1997 թ. ստորագրված հաշտության պայմանագրից հետո: Ավելին, այն շատ հաճախ շահարկվել է ինչպես Տաջիկստանի իշխանությունների, այնպես էլ արտաքին դերակատարների կողմից, որոնք լուրջ ազդեցություն ունեին Տաջիկստանի ներքաղաքական զարգացումների վրա:

ԽՍՀՄ փլուզումից հետո Տաջիկստանում տեղի ունեցած քաղաքական գործընթացների ընթացքում իսլամական և ազգայնական գաղափարախոսությունը կրող ուժերի համախմբման գործընթաց սկսվեց: 1990 թ. Տաջիկստանում քաղաքական իրադարձությունները բավական արագ էին զարգանում. 1991 թ.՝ Տաջիկստանում տեղի ունեցած հերթական իշխանափոխությունից հետո, երբ Տաջիկստանի նախագահի ժամանակավոր պաշտոնը ստանձնեց Ղադիրի-դին Ասլանովը, Տաջիկստանում կասեցվեց կոմունիստական կուսակցության գործունեությունը, որը ներքաղաքական լարվածության պատճառ դարձավ, ինչի հետևանքով էլ Ղ. Ասլանովը հրաժարական տվեց:

Կոմկուսի նախկին առաջին քարտուղար Ռահմոն Նաբիևը, գալով իշխանության (1991 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր), կրկին վերականգնում է Կոմկուսի գործունեությունը: Այդ ընթացքում արդեն ընդդիմադիր դաշտը՝ ի դեմս Տաջիկստանի իսլամական վերածնունդ կուսակցության (ՏԻՎԿ), Տաջիկստանի դեմոկրատական կուսակցության (ՏԴԿ) և «Ռասթոխեզ» (Ջարթոնք) կուսակցության, լիարժեք ձևավորվել էր և քաղաքական լուրջ պայքար էր սկսել:

«Ռասթոխեզի» հիմնական նպատակն էր թարմացնել տաջիկների ազգային ինքնագիտակցությունը և վերականգնել հիշողությունն իրանական պատմամշակութային ժառանգության նկատմամբ: Շարժման հիմնադիրները Տաջիկստանը տեսնում էին որպես անկախ և ինքնիշխան

الهه كولايی، ایران و روسیه در آسیای مرکزی، ایران و مطالعات منطقه ای: آسیای مرکزی (مجموعه 13  
44 تهران 2008 ص. 44 [Էլահե Քոուլայի, Իրանը և Ռուսաստանը  
Կենտրոնական Ասիայում, Իրան և տարածաշրջանային հետազոտու-  
թյուններ. Կենտրոնական Ասիա, Թեհրան, 2008, էջ 44]:

երկիր՝ կազմավորված ազգային գաղափարախոսության հիման վրա<sup>14</sup>:

Տարածված տեսակետի համաձայն՝ 90-ականների սկզբին Տաջիկստանում տեղի ունեցած զարգացումները ընկալվում և ներկայացվում էին որպես պայքար կոմունիստների և իսլամականների կամ աշխարհիկ կարգերի պահպանման և կրոնական կարգերի հաստատման կողմնակիցների միջև:

Թեև տաջիկ մտավորականության որոշ շրջանակներ քննարկում էին Տաջիկստանում իրանական մոդելի կառավարման համակարգ ձևավորելու հնարավորությունը, սակայն հետխորհրդային իրանախոս երկրի հասարակության զգալի մասը մտահոգված էր իսլամականների ազդեցության մեծացմամբ, և այդ հանգամանքով էլ պայմանավորված Տաջիկստանում հակաիրանական տրամադրություններ ձևավորվեցին<sup>15</sup>:

Սակայն կրոնական գործոնի հետ կապված իրավիճակն այլ էր: 1991 թ. Տաջիկստանում տեղի ունեցած նախագահական ընտրությունների ընթացքում վերոնշյալ քաղաքական կուսակցությունները միավորվել էին ընդդիմության միասնական թեկնածու Դավլաթ Խուլոնազարովի շուրջը, որի մրցակիցն էր Ռահմոն Նաբիևը<sup>16</sup>:

Հետաքրքրական է, որ Խուլոնազարովն առաջադրվել էր Բադախշանի շրջանի շիայական համայնքի (*խ-*

*մայիլական ուղղության հետևորդներ էին*) կողմից<sup>17</sup>, հետևաբար, եթե Տաջիկստանի ընդդիմության մեջ ներգրավված իսլամական (*սուննիական*) շարժման նպատակը Տաջիկստանում իսլամական կարգերի հաստատումը լիներ, ապա չէր ընդունի շիայական-իսլամական համայնքի ներկայացուցչին՝ որպես իր առաջնորդ, որը նախագահական ընտրություններում հաղթելու դեպքում կարող էր առաջին հերթին առաջ մղել շիաներին:

Այն, որ պայքարը կրոնական ուղղվածություն չուներ՝ փաստում է նաև այն հանգամանքը, որ ՏԻՎԿ-ն ընդդեմ նեոկոմունիստական ուժերի միանում է այսպես ասած աշխարհիկության կողմնակից ՏԴԿ-ին, ազգային գաղափարախոսություն կրող «Ռասթոխեգ» կուսակցությանը և Բադախշանի «Լաալի» շարժմանը:

Տաջիկստանի իսլամական շարժման ակնառու ներկայացուցիչներից մեկը՝ Աքբար Թուրաջոնզոդան, իր հարցազրույցներից մեկում նշել է, որ Տաջիկստանում կրոնական կարգերի հաստատումը ո՛չ ցանկալի էր և ո՛չ էլ գործնականում հնարավոր էր իրականացնել: Ավելին նա, կանգնած լինելով Տաջիկստանում իսլամական շարժման ձևավորման ակունքներում, համոզմունք է հայտնել, որ եթե փորձ կատարվեր Տաջիկստանում իսլամական կարգեր հաստատելու, ապա կկործանվեր պետությունը<sup>18</sup>:

Ավելին, տաջիկների մեծամասնությունը գերադասում էր ունենալ ժողովրդավարական, ազգային արժեքների հիման վրա ձևավորված աշխարհիկ, այլ ոչ թե իրանական իսլամական հանրապետություն:

<sup>14</sup> **Epkenhans T.**, The Origins of the Civil War in Tajikistan: Nationalism, Islamism and Violent Conflict in Post-Soviet Space, Lexington Books, 2016, p. 50.

<sup>15</sup> **Санаи М.** Взаимоотношения Ирана и Центральной Азии: Тенденции и перспективы. Москва, 2017, стр. 105.

<sup>16</sup> **Karagiannis E.**, Political Islam in Central Asia, Routledge, 2010, p. 17-18.

<sup>17</sup> Տաջիկստանի շիաները մեծամասամբ կենտրոնացած են Բադախշանում և իրենց կրոնական համոզմունքներում ավելի չափավոր են:

<sup>18</sup> **Dagikhudo D.**, Regime transition in Central Asia, Stateness, nationalism and political change in Tajikistan and Uzbekistan, New York, 2014, p. 102.

Տաջիկստանի քաղաքացիական պատերազմի ընթացքում Իրանի աջակցությունն այս կամ այն ուժին ավելի շատ պայմանավորված էր ոչ թե Տաջիկստանի վրա ազդեցությունը մեծացնելու ձգտումով, այլ առաջին հերթին մտահոգված էր այդ երկրի անկայունությամբ և իր քայլերն ուղղված էին կանխելու հնարավոր այն բացասական գործընթացները, որոնք կարող էին ազդել Իրանի վրա, որն իր գործողությունները բացատրում էր Տաջիկստանի հետ քաղաքակրթական ընդհանրություններ ունենալու հանգամանքով<sup>19</sup>:

Ինչ վերաբերում է քաղաքացիական պատերազմի պատճառներին, դժվար է միանշանակ գնահատական տալ, սակայն հստակ է, որ նորանկախ Տաջիկստանի իշխանությունները ճիշտ չէին ընկալում ընդդիմության պահանջները, և այդ հանգամանքով էլ պայմանավորված արտաքին դերակատարներին հաջողվում էր գործողություններն ուղղորդել իրենց շահերին համահունչ ուղղությամբ:

Տաջիկստանում քաղաքացիական պատերազմի ընթացքում իսլամականների գործողությունների և Իրանի՝ ՏԻՎԿ-ին ցուցաբերած ուղղակի և անուղղակի աջակցությունը խիստ մտահոգում էր նաև Ուզբեկստանին, որը Տաջիկստանում կայունության ապահովման միակ ճանապարհը տեսնում էր Տաջիկստանում կոմունիստական էլիտայի իշխանության պահպանումը: Սակայն, ինչպես վերևում նշեցինք, տեսականորեն որքան էլ Իրանը հակված լիներ Տաջիկստանում իսլամական կարգերի հաստատմանը, միևնույնն է, Թեհրանի գործողություններն այդ հարցում խիստ սահմանափակ էին<sup>20</sup>:

<sup>19</sup> **Dagikhudo D.**, նշվ. աշխ., էջ 100:

<sup>20</sup> **Кулай Э.** Привязанность безопасности Афганистана и Таджикистана. Аму-Дарья, 2003, № 3, стр. 50-55.

Իրանի մասնակցությունը Տաջիկստանի գործընթացներին նաև կարելի է պայմանավորել այն հանգամանքով, որ Ռուսաստանն ու Ուզբեկստանը միակողմանի աջակցություն էին ցուցաբերում Տաջիկստանի իշխանություններին, իսկ Իրանը, աջակցելով ընդդիմությանը, հավասարակշռում էր իրավիճակը<sup>21</sup>:

Այդ հանգամանքով էր պայմանավորված, որ Իրանը կարևոր դերակատարություն է ունեցել Տաջիկստանում քաղաքացիական պատերազմը դադարեցնելու և հակամարտող կողմերի միջև խաղաղության համաձայնագիր կնքելու գործում: Իրանը Ռուսաստանի, Աֆղանստանի, Պակիստանի հետ միասին Տաջիկստանում խաղաղության հաստատման երաշխավորն էր, սակայն Հաշեմի Ռաֆսանջանիի նախագահության շրջանում Իրանն իր ուշադրությունը կենտրոնացրել էր 1996 թ. Աֆղանստանում սկիզբ առած Թալիբան շարժման գործունեությանը և դրանով պայմանավորված աստիճանաբար սկսեց ավելի քիչ ուշադրություն դարձնել Տաջիկստանին:

Էմոմալի Ռահմոնն իշխանության էր եկել նեոկոմունիստական ուժերի կողմից, սակայն քաղաքացիական պատերազմից հետո գիտակցեց, որ, միայն կոմունիստական արժեհամակարգի վրա հիմնվելով, չէր կարող ապահովել Տաջիկստանի հասարակության միասնականությունը: Իր իշխանության դիրքերն ամրապնդելու նպատակով նա ձեռնամուխ եղավ ազգայնական գաղափարախոսության ձևավորմանը, որի հիմքում դրվեցին տաջիկների փառապանծ

<sup>21</sup> *Tasnim. 2017.*, رهبر نهضت اسلامی تاجیکستان: صلح تاجیکستان از دستاوردهای مهم ایران, [Տաջիկստանի իսլամական վերածնունդ կուսակցության ղեկավար. Տաջիկստանում խաղաղության հաստատումն Իրանի կարևոր ձեռքբերումներից էր],

<https://www.tasnimnews.com/fa/news/1397/03/30/1753872/> :

պատմությունը և մշակույթը: Այսպիսով, կրոնական շրջանակների ազդեցությունը թուլացնելու նպատակով հասարակության մեջ առաջացած գաղափարական վակուումը լցվեց ազգայնականությամբ: Մշակութային քաղաքականության միջոցով քարոզվում էին պատմական այնպիսի սիմվոլներ, որոնք ոգևորում, հպարտության զգացում էին պարգևում հասարակությանը: Էմոնալի Ռահմոնի այդ քաղաքականությունը տարիների ընթացքում հանգեցրեց անձի պաշտամունքի, երբ Տաջիկստանի գործող նախագահը սկսեց համեմատվել Սամանյան հարստության էմիր Իսմայիլ Սամանիի հետ<sup>22</sup>:

1998 թ. ստեղծվում է Տաջիկստանի ժողովրդադեմոկրատական կուսակցությունը, որը ստեղծման օրվանից մինչ օրս ղեկավարում է Էմոնալի Ռահմոնը: Աստիճանաբար մեծացնելով իր ազդեցությունը՝ նա ամբողջովին իր վերահսկողության ներքո է վերցնում քաղաքական դաշտը. ընդդիմության առաջնորդների մեծ մասն արտաքսվում է երկրից՝ հիմնականում հաստատվելով հարևան երկրներում՝ Իրանում, Ռուսաստանում, Աֆղանստանում:

Չնայած ընդդիմադիր ուժերի գործունեությունը սահմանափակելուն ուղղված Ռահմոնի ջանքերին՝ ՏԻՎԿ-ին՝ Կենտրոնական Ասիայում գրանցված միակ իսլամական կուսակցությանը, հաջողվում է մինչև 2015 թ. նշանակալի ազդեցություն ունենալ երկրի ներքաղաքական զարգացումների վրա՝ ունենալով ներկայություն նաև խորհրդարանում:

Հետևողական քաղաքականության շնորհիվ, սակայն, Էմոնալի Ռահմոնին փաստացի հաջողվում է միմյանցից տարանջատել իսլամական և ազգայնական ուժերին: Այդ քաղաքականության արդյունքում իսլամականները դիտվեցին որպես սպառնալիք երկրի ազգային անվտանգու-

<sup>22</sup> Epkenhans T., նշվ. աշխ., էջ 344:

թյանը, իսկ այն երկրները, որոնք իսլամականների հետ համագործակցում կամ շփումներ էին ունենում, մեղադրվում էին Տաջիկստանի ներքին գործերին միջամտելու մեջ:

Դա պայմանավորված է ինչպես Սաուդյան Արաբիայի և Տաջիկստանի միջև վերջին տարիներին հաստատված սերտ հարաբերություններով, այնպես էլ ՏԻՎԿ-ի նկատմամբ Իրանի Իսլամական Հանրապետության ունեցած փոխգործակցությամբ:

2015 թ. Իրանի և Տաջիկստանի հարաբերություններում առկա լարվածությունը հասավ գագաթնակետին, որը պայմանավորված էր ինչպես Իրանի, այնպես էլ Տաջիկստանի իշխանությունների չկշռադատված և կտրուկ քայլերով: 2015 թ. Իրանում տեղի ունեցած «Իսլամական միասնություն» համաժողովին հրավիրվել էր նաև ՏԻՎԿ-ի ղեկավար Մուհիդդին Քաբիրին, և համաձայն արարողակարգի՝ նա ևս պետք է հանդիպում ունենար ԻԻՀ հոգևոր առաջնորդ Ալի Խամենեյիի հետ: Այդ փաստը խիստ մտահոգեց Տաջիկստանին, որն Իրանից պահանջեց ՏԻՎԿ-ին ճանաչել որպես ահաբեկչական կազմակերպություն, ինչն Իրանի համար բնականաբար անընդունելի էր:

Տաջիկստանը, չբավարարվելով Իրանի իշխանությունների պարզաբանումներից, հետ կանչեց Թեհրանում իր դեսպանին, դադարեցվեց Դուշանբեում ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոնի գործունեությունը, բացի այդ՝ Տաջիկստանի Գերագույն դատարանի որոշմամբ արգելվեց կուսակցության գործունեությունը, իսկ ղեկավար կազմը ձերբակալվեց<sup>23</sup>:

<sup>23</sup> Easterniran. 2017., مروری بر مولفه‌های داخلی و خارجی موثر بر سیاست خصومت در تاجیکستان [Ակնարկ Տաջիկստանի թշնամական քաղաքականության վրա ազդող ներքին և արտաքին ցուցիչների մասին] [http://easterniran.com/fa/doc/analysis/906/:](http://easterniran.com/fa/doc/analysis/906/)

Հաջորդ միջադեպը, որը լարվածություն առաջացրեց Իրանի և Տաջիկստանի հարաբերություններում, կապված էր 2015 թ. Տաջիկստանի ՊՆ նախկին փոխնախարար Աբդուխալիմ Նազարզոդայի<sup>24</sup> գլխավորած խմբավորման կողմից իրականացված զինված հարձակման (հեղաշրջման փորձ) հետ: Այդ դեպքից հետո Տաջիկստանի իշխանությունները Ա. Նազարզոդային ոչ միայն մեղադրեցին ՏԻՎԿ-ի հետ կապ ունենալու մեջ<sup>25</sup>, այլև Իրանին մեղադրեցին հեղաշրջման փորձ կատարելու ընթացքում նրան ցուցաբերած աջակցության համար<sup>26</sup>:

Այսպիսով, 2000-ական թվականների սկզբին Իրանի և Տաջիկստանի հարաբերություններում առաջացած և մինչ օրս շարունակվող լարվածությունը բացառապես պայմանավորված էր կրոնական գործոնով, որը անցնող տարիների ընթացքում ավելի է խորացրել Թեհրանի և Դուշանբեի միջև առկա լարվածությունը և բարդացրել երկխոսության հնարավորությունը:

Ուսումնասիրելով Իրանի և Տաջիկստանի հարաբերությունների հետխորհրդային շրջանը՝ կարող ենք փաստել, որ այդ շրջանում երկու իրանախոս երկրների հարաբերությունները զարգացել են փոխադարձ անվստահության մթնոլորտում: Թեև տարբեր շրջափուլերում ինչպես Թեհրանը, այնպես էլ Դուշանբեն փորձել են փոխշահավետ

հարաբերություններ կառուցել, սակայն կողմերին այդպես էլ չի հաջողվել ապահովել նման նախաձեռնությունների շարունակականությունը:

Կրոնական գործոնը Տաջիկստանի նորագույն պատմության մեջ կարևոր նշանակություն է ունեցել: Եթե հետխորհրդային Տաջիկստանում իշխանության եկած քաղաքական ուժերը որպես մարտահրավեր տեսնում էին կոմունիստական գաղափարախոսությունը, ապա քաղաքացիական պատերազմի ավարտից հետո ձևավորված իշխանության համար սպառնալիք դիտվեց իսլամը:

Քաղաքացիական պատերազմից հետո Տաջիկստանի իշխանությունների վարած կրոնական քաղաքականությունն իր ազդեցությունն է թողել Տաջիկստանի հասարակական-քաղաքական ընկալումների վրա: ՏԻՎԿ-ին վերագրվող յուրաքանչյուր խնդրահարույց միջադեպ ենթագիտակցորեն կապվում է Իրանի Իսլամական Հանրապետության հետ, ինչը նպաստում է առանց այդ էլ լարված հարաբերությունների առավել սրմանը:

Մեր կարծիքով, սակայն, Տաջիկստանի նման քաղաքականությունը պայմանավորված չէ միայն, ինչպես Իրանն է պնդում, Սաուդյան Արաբիայի՝ Դուշանբեի վրա ունեցած ազդեցությամբ: Պարզապես Իրանի Իսլամական Հանրապետությունը քաղաքացիական պատերազմին հաջորդած ժամանակաշրջանում Տաջիկստանի նկատմամբ սխալ քաղաքականություն է վարել, այնինչ «իրանականության» գործոնն օգտագործելով՝ Իրանը մեծ հնարավորություն ուներ ոչ միայն փարատելու Տաջիկստանի՝ Իրանի նկատմամբ ունեցած անվստահությունը, այլև ամուր հիմքերի վրա խորացնելու իրանախոս այդ երկրի հետ հարաբերությունները՝ ամուր հենարան ունենալով Կենտրոնական Ասիայում:

<sup>24</sup> Տե՛ս **News.tj**. 2015., “Кем был беглый генерал? Биография Назарзода”, <http://news.tj/ru/node/214229>:

<sup>25</sup> Տե՛ս **BBC**. 2015., “Таджикские спецслужбы убили мятежного генерала и его сторонников”, [http://www.bbc.com/russian/international/2015/09/150916\\_tajikistan\\_general\\_killed](http://www.bbc.com/russian/international/2015/09/150916_tajikistan_general_killed):

<sup>26</sup> Տե՛ս **Easterniran**. 2017., [ژورنال] ظریف در تاجیکستان؛ یک سفر با چند ابهام՝ *Տաջիկստանում: Այց՝ բազում անորոշություններով* <http://easterniran.com/fa/doc/analysis/1032/>:



## ETHNIC AND RELIGIOUS FACTOR IN THE IRAN-TAJIKISTAN RELATIONS

**Keywords:** Iran, Tehran, Tajikistan, Dushanbe, Uzbekistan, USSR, Central Asia, ethnic, religious, Relations.

During the last thirty years the ethnic and religious factor has had an important impact in the relations between two Iranian-speaking countries, for Iran and Tajikistan. Having cultural, linguistic and ethnic strong ties with Tajikistan, Iran attached great importance to the development of this Iranian-speaking country after the collapse of the USSR.

During the civil war in Tajikistan in the 1990s, Tajikistan was particularly important for Iran. The Islamic Republic of Iran is one of those countries whose immediate efforts made peace approved in this country after several years of civil war.

Heedless of the fact that after the collapse of the USSR relatively warm relationship was formed between Tehran and Dushanbe, thus after the civil war the relations between these two Iranian-speaking countries were developed in an atmosphere of mutual mistrust as a result of policy conducted both by Iran and Tajikistan. Even though in different periods Tehran and Dushanbe tried to build mutually beneficial relationships, the sides did not succeed in continuing such initiatives.

## CHINA'S "ONE BELT, ONE ROAD" INITIATIVE AND ITS IMPACT IN CENTRAL ASIA

**Keywords:** China, Beijing, Tibet, Central Asia, USSR, "One Belt, One Road", "Western Europe - Western China", Partnership, Economic.

### China's relations with the Central Asian states following the USSR collapse

Following the collapse of the Soviet Union, China has endeavored to build and strengthen its relations with the five Central Asian (CA) states of Kazakhstan, Kyrgyzstan, Tajikistan, Turkmenistan and Uzbekistan.

In January 1992, only one month after founding of the new CA countries, China signed a series of agreements to establish diplomatic relations with all of them.<sup>1</sup> Since then China and its CA neighbors have developed a close relationship, initially economic but increasingly also political, security<sup>2</sup> and cultural ties with China. All five countries in the region have

---

<sup>1</sup> **Pan Guang**, China and Central Asia: Charting a New Course for Regional Cooperation, China Brief, Vol. 7, Issue: 3, The Jamestown Foundation, 09.05.2007.

[http://www.jamestown.org/programs/chinabrief/single/?tx\\_ttnews%5Btt\\_news%5D=4028&tx\\_ttnews%5BbackPid%5D=197&no\\_cache=1](http://www.jamestown.org/programs/chinabrief/single/?tx_ttnews%5Btt_news%5D=4028&tx_ttnews%5BbackPid%5D=197&no_cache=1)

<sup>2</sup> **Peyrouse S.**, Central Asia's Growing Partnership with China, Working Paper, No. 4, 2009, Eu-Central Asia Monitoring, October, 4-13. <http://www.railway-technology.com/features/featurecan-the-trans-caspian-route-deliver-the-next-freight-revolution-4684339/> [08.09.2017].